

միասին և մէկը միւսի միջնորդութեամբ Հասունանալ Աստուծոյ արքայութեան Համար: Քրիստոնէական Հաւատն ուսուցանում է ամուսիններին նայել միմեանց վերայ իբրեւ արարածների վերայ որոնք նշանակած չեն միայն երկրաւոր կեանքի Համար, այլ և նորա Համար, որ ապագայում յառնեն ի մեռելոց իբրեւ ժառանգակիցք շնորհացն կենաց (Առ. Պետ. Գ. 7):

(Կը շարունակուի):

ԵԿԵՂԵՅԻՈՅ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՀԱՐՔ

(ՖԱՐՐԱՐԻ ՆՈՐ ՀԱՐԴՐՈՒԹԻՒՆՆԵՅ)

II. ՍՈՒՐԻ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՄԵԾՆ ԲԱՐՍԵՂ

Գրիգորը վերջացրել էր իւր ուսումը, նա Սեսարիայում սովորել էր Զարտասանութիւն, Աղէքսանդրիայում սակաւ ինչ ծանօթացել էր պղատօնական փիլիսոփայութեանը: Խորին յարգանքք անձնատուր եղաւ Աթանասին և նիկիական աստուածաբանութեանը և հոգեզմայլութեամբ անձնատուր էր Որոգինէսին և նորա՝ սուրբ գրքի մեկնութեանն ու խորհրդածութեան ձևին: Աթէնքը, ուր նա տասն տարու չափ ապրել էր, նորա վերայ աւելի ևս խոր տպաւորութիւն էր թողել: Նորա ծանօթութիւնը Բարսեղի հետ՝ այնտեղ անձնանուէր բարեկամութեան հասաւ. իսկ Յուլիանոսի հետ ծանօթութիւնը՝ վերին աստիճանի զգուանքի: Նա հին դասական Յունաստանի գրականութեանն ու փիլիսոփայութեանը հիմնաւորապէս ծանօթացաւ, և բոլորովին հմտացաւ նոյն ժամանակի նորաձեւութիւն դարձած հետաքրքրութեանն ու հակաճառութեանը: Մի և նոյն ժամանակ հեթանոսական պատրող հրապոյրների դէմ անդրդուելի մնաց և քրիստոնեայ կոչումն աւելի ու աւելի հիմնաւոր նպատակ դարձաւ նորա կեանքի համար:

Մօտ 356 թուին նա տուն վերադարձաւ Կ. Պօլսի վերայով: Այստեղ առանց կանխագոյն տեղեկութեան՝ պատահաբար, բայց բարեբաղդութեամբ՝ հանգիպեց նա իւր Աեսարիոս եղբօրը, որը, ի միջի այլոց՝ Աղեքսանդրիայում այնպիսի յաջողութեամբ և հռչակով ուսումնասիրել էր բժշկութիւնն ու այլ գիտութիւնները, մինչ բռնութեամբ կամենում էին նորան արևելքի մայրաքաղաքում պահել: Իսկ Աեսարիոսը որքան և եսասէր բնաւորութեան մարդ, բայց իւր զառամեալ ծնողներին տեսնելու համար յանձն առաւ իւր եղբօրը ուղեկցիլ դէպ ի տուն: Նոննան շատ անգամ աղօթել էր Աստուծուն, որ իւր որդիքը իրանց մանկութեան տանը տեսնէ, և նա բաղդ ունեցաւ երկամեայ բացակայութիւնից յետոյ իւր որդւոցը նորից տուն վերադարձած տեսնել, իրանց ծնողների կրօնքի մէջ ամուր մնացած և կեանքի կռուի միջից էլ անվեհեր և յաղթանական դուրս ելնելու պատրաստութեամբ օժտուած:

Երկու եղբայրներն էլ յաջողակ մարդիկ էին, և գիտէին օգտուիլ իրանց կրթութեան բոլոր բարեյաջող պայմաններից. իսկ այլ պարագաներում՝ միմեանցից տարբերվում էին: Աեսարիոսը որոշ աստիճանով աշխարհասէր էր, մինչդեռ Գրիգորի բոլոր ձգտումները հոգեւոր էին: Աստուծոյ սէրը երկու եղբայրների սրտերի մէջ էլ վառ էր. թէ՛ և, Գրիգորի սրտում այդ սէրը զօրաւոր և ամենակէզ կրակ էր, իսկ Աեսարիոսի մէջ՝ աւելի տատանուող և անկայուն բոց: Աեսարիոսը չը կարողացաւ որեւէ գաւառական փոքրիկ քաղաքում կապուել և ապրել, Իւր ծնողների և իւր եղբօր ցանկութեան հակառակ նա, Կ. Պօլսի աշխարհային փայլուն հրապոյրներից յաղթահարուած, որպիսի վտանգներ էլ լծորդ լինէին նորան, աճապարեց դէպ ի Կ. Պօլիս: Հասաւ նա Կ. Պօլիս և միանգամից Աոստանտիոս կայսրի պալատական բժիշկը դարձաւ: Հատ թանկ արժէք նորա համար այդ յաջողութիւնը, որովհետեւ Աոստանտիոս լինելով կասկածոտ բնաւորութեան մարդ՝ հազիւ երբեք էր իւր բարեկամութեամբ, այդպէս արագ և յօժարակամ բաղդաւորեցրել որ և է անձի, ինչպէս արեց նա երիտասարդ կապադովկեցու վերաբերութեամբ: Ինչպէս կասեն, — Աեսարիոսը իւր բժշկական ասպարիզում մի թռիչքով ամենառաջին տեղը գրաւեց, և, ինչպէս արքունիքը, նոյնպէս և կայսրը գոհ էին նորա դուրեկան և գիտնականի վայել ձևերից, Բարեբաղդաբար նորա հաւատն անդրդուելի մնաց այս փորձութիւնների մէջ, նա պահպանեց իւր քրիստոնէական պարզութիւնը, նոյն իսկ մի տարիից կայսր դարձած Յուլիանոսի հրապուրիչ գուրգուրանքը անզօր մնաց նորա հաւատքը փորձութեան ենթարկելու վերաբերութեամբ: Քրիստոնեաներին շաա անգամ հաւատուրոց դարձնող Յուլիանոսը կարծում էր թէ կը յաջողի Աեսարիոսին էլ միացնել իւր յաղթահարածների թուին, բայց երիտասարդ բժիշկը

պաշտպանեց իւր դաւանութիւնը այնքան լէգէօնների իշխողի դէմ և աւագանւոյ մի ժողովի առաջ յայտնապէս խոստովանեց, որ «ինքն քրիստոնեայ էր և կը մնայ միշտ»։ «Ո՛հ, բաղդաւոր հայր, գոչեց կայսրը, ո՛հ, անբաղդ որդիք»։ Հայրը բաղդաւոր էր, որովհետեւ նորա տուած դաստիարակութիւնը անդրդուելի էր մնում, մտածում էր կայսրը, իսկ որդիքը անբաղդ են, որովհետեւ հեթանոսական կրօնքով չեն դաստիարակուած 1)։

Հասարակական կեանքի աղմուկներին և փառքին չը ձգտելով՝ Գրիգորը մի ցանկութիւն ունէր միայն, թէ ինչպէս աշխարհից բոլորովին խոյս տայ։ Աեսարիոսի համար՝ Նազիանզը որքան նեղ մթնոլորտ էր, Գրիգորի համար՝ նոյնքան և աւելի ևս ընդարձակ էր։ Երբ Ա. Պօլիս գնալու համար Աեսարիոսը ջանահնար էր լինում թողնել Նազիանզը, Գրիգորն էլ աւելի ևս տապալկվում էր նրան թողնել,՝ կատարեալ միայնակեցութեան անձնատուր լինելու համար։ Գիտութեանց վերաբերութեամբ նա յագեցրել էր իւր պսսքը. այժմ՝ նա խորհական - վերացական կեանքի էր ծարաւի։ Նորա Նազիանզացի համաքաղաքացիք ցանկանում էին վայելել նորա այնքան երկար տարիների հասուն ուսման պտուղները, ուստի և նոցա սիրտը շահելու համար մի կամ երկու հրապարակախօսութիւն արեց։ Նա «փոքր ինչ պարեց, ասում է ինքն, և այնուհետեւ թողեց բեմը»։ Նա դրականապէս մերժեց ճարտասանութեան ուսուցչի պաշտօնը, որովհետեւ մկրտուել էր պատրաստվում, որը, ի մեծ զարմանս՝ չէր շտապեցրել եւ դէպի Աթէնք փոթորկալից ճանապարհորդութեան ժամանակ տաճած հոգեկան տագնապը։ Նա որպէս իւր կեանքի գլխաւոր դէպքն էր համարում մկրտութիւնը, որով պէտք է լուացուէին իւր բոլոր անցեալ մեղքերը, և նա այնուհետեւ պէտք է ապրէր զոհելով Աստուծոյ աթոռի պատուանդանին իւր ուսումը, տաղանդը, ճարտարաբանութիւնը և այն ամենը, ինչ որ ունէր և իւրն էր։ Մկրտութիւնը պէտք է դառնար թանկագին մարգարիտը գնելու համար՝ նորա կատարեալ և վերջնական տրիտուրը։ Յիշաւի, նա կամենում էր օգտուիլ իւր ճարտարաբանութեամբ, բայց միայն որպէս մի արդիւնաւոր միջոցով։ «Խօսքը, այսինքն միտք արտայայտելու շնորհը է այն ամենը, որ ես, որպէս բանի սպասաւոր՝ դեռ ևս գնահատում եմ։ Եւ որովհետեւ անարգում եմ երկրային բոլոր զուարճութիւնները, ուստի սէրս միայն գորանով, կամ աւելի ճիշտն ասել՝ միայն Աստուծով է սահմանափակվում»։

1) Անտարակրոյ Գրիգորը ամեն հնարաւոր միջոցները գործ էր դնում թէ խորհրդով եւ թէ նամակներով Աեսարիոսին իւր հայրերի Աստուծուն անձնանուէր լինելուն մէջ կազդուրելու համար։

Նա ասաց իմաստութեանը, «գու իմ՝ քոյրն ես», և այս իմաստութեան ու բանականութեան շնորհը որոնում էր որպէս իւր գեղեցկութեան և ճոխութեան պսակ:

Գրիգորի առաջ դրուած էին բարեպաշտական կեանքի երկու պատկերներ — վերացական և գործնական կեանք՝ որի օրինակն էին Եղիա մարգարէն և Յովհաննէս Մկրտիչը. և «կեանք»՝ որին հետեւել էին Պետրոս և Պօղոս առաքեալները: — Աւերջինս նա աւելի օգտակար էր համարում մարդկութեան համար: Ի բնէ հակամէտ լինելով դէպ ի մենակեցութիւն, նա միանգամայն հեռի էր նախամեծար համարելու խստամբեր ճգնաւորութիւնը, որը գովասանելու համար երանելին — Հերոնիմոս սպառում է իւր հոգեւորութիւնը, Նա տեսնում էր թէ՛ հասարակական և թէ՛ վանական կեանքը ազմկող չարիքներն և վտանգները, ուստի և ցանկանում էր երկուսից էլ խոյս տալ: Վերցնելով ինչ որ երկուսի մէջ էլ լաւն էր: «Պամենոս» ես, հարցնում է նա իւր մի վիպերգութեան մէջ, նախադասել գործունէութիւնը թէ խորհականութիւնը: — Տեսիլքը գործ է կատարեալի, իսկ գործողութիւնը՝ — մեծամասնութեան: Երկուսն էլ գեղեցիկ են և օրինաւոր: Բայց ձգտիր այն բանին՝ ինչ որ պահանջում է բնութիւնդ: Նա դէպ ի վերացականը այնքան հակամէտ էր, որ անշուշտ նախամեծար կը համարէր վանական կեանքը ընտրել: Զանալով միանգամայն լծորդել նորան օգտակար գործունէութեան հետ: Սակայն երկու պարագայ հարկադրեցին նորան տանը մնալ: — Ս. Գիրքը ուսումնասիրելու մեծ յարմարութիւնը և իւր ծերունի ծնողներին, նոցա զառամելութեան հասակում, խնամարկելու պարտքը: Եւ ընտանեկան կեանքը չէր զրկում նորան ճգնաւորականից. մանաւանդ որ նորան սիրելի էր վանական միայնակեցութեան բարիքը լծորդել աշխարհիկ կեանքի բարիքի հետ: Քնում էր բաց գետնի վերայ, հագնում էր հասարակ և կոպիտ հագուստ, սնանկում էր աղ ու հացով և բաց ի ջրից՝ ուրիշ բան չէր խլում: Յերեկը աշխատում էր, գիշերուայ մեծ մասը անցնում էր օրհնաբանութեամբ: աղօթքով և երկիւղած խորհրդածութեամբ: Իւր նախկին կեանքը և հակումն դէպ ի ծաղրը՝ երկար և դառնագին աւաղում էր: Իւր անցեալ կեանքը, թէ՛ անմեղ, բայց դատապարտելի էր թուում իրան, որովհետեւ շատ խստամբեր կեանք վարած չէր եղել: Նորա կտակից գիտենք որ, թէ՛ և նա իւր հայրենական ժառանգութիւնից չէ եղել հրաժարուած, բայց բաշխել է այդ ժառանգութիւնը աղքատներին: Նա լուսկեցութեան և ինքն իրան փորձելու մէջ էր գտնում իւր մեծ երջանկութիւնը, թէ՛ և իւր հօր կալուածքը կառավարելու պարտքը իւր վերայ էր ծանրացած (որի մասին որքան և նա դառնագին գանդատէր, բայց օգտակար էր այն նորա համար): Նա պարտաւոր էր այդ կալուածական գործի

Թէ՛ իրաւարանական և Թէ՛ մշտական պարագաներին ամեն կերպ հսկելու: Նա գլխաւորապէս դանգատում էր ծառաներ կառավարելուց, որ «կորուսիչ ուռական» էր անուանում: Բազմաթիւ և տաժանելի հոգսերը ինձ, ասում է նա մի ոտանաւորի մէջ, երկնքից դէպ ի մայր երկիրն են քարշում: Բայց կատարեալ փորձը գուցէ նորան ապացուցանէր, թէ «շատ անգամ երկինքը մեզ աւելի մօտ է լինում երբ մենք կորացած ենք լինում, քան թէ՛ երբ դէպ ի վեր ենք ձգտում»:

Բարսեղը զմայլած լինելով Եգիպտոսում և Ասորիքում ճանապարհորդած ժամանակ վանական եռանդով, այս ժամանակ Աեսարիայից դէպ ի Պոնտոս, Իրիս գետի մօտ՝ Աննէս գեղեցիկ աւանը գնաց, որտեղից յիշեցրեց Գրիգորին Աթէնքում արած խոստումը, որով խոստացել էր նա մասնակից լինել իւր մենակեցական կեանքին: Գրիգորը այդ ժամանակ նազիրանդի մօտ, Տիբերինգեան գաւառի իւր հօր կալուածքումն էր ապրում, և Բարսեղը, դեռ Աեսարիայից, մի նամակով արդէն ծաղրել էր նորա ցուրտ և ցեխոտ բնակարանը: Գրիգորը նոյնպիսի հանաքով պատասխանել էր, հրաւիրելով նորան ժամանակ անցկացնել իւր բնակարանի մէջ մարդաշատ քաղաքում: «Ես չեմ կամենում ցեխոտ և ցուրտ Տիբերինգի մասին քո արհամարհական նկատողութիւններին պատասխանել, ասում է նա, ո՞վ իմ, հարթութիւնների վերայ շրջող և օդի մէջ՝ սաւառնող, և Աբարիսի նետերի վերայ սլացող բարձրաստիճան բարեկամ . . . «Մեղաւոր եմ՝ ես որ գունատ ես, գրում է նա, և «գոլարութեամբ շնչում, և չափում ես քո արեգակնային խեղճուկ լոյսը, մինչդեռ ես վայելում եմ թարմ առողջութիւն, գո՛հ եմ և նեղութիւն չեմ քաշում»: Դու ունիս հետեւեալ առաւելութիւնները. դու ճոխանում ես, փարթամանում և ապրում՝ կարծես վայելքների մէջ, շեմ գովիլ այդ: Ուստի կամ՝ մեզ էլ մի՛ յանդիմանիլ մեր ցեխերի պատճառով, (որովհետեւ ոչ ես եմ այս քաղաքը շինել և ոչ դու կարգել ձմեռը) կամ՝ մեր ցեխի տեղ կը մատուցանեմ քեզ ձեր մանրավաճառները և քաղաքի բոլոր առախորժութիւնները»:

Սկզբից մինչև վերջը կատակի և սրախօսութեան այս, և սորա նման մանր նկատողութիւնները ապացուցանում են, որ Գրիգորի անձնական ձգտումները բնաւ չէին ճնշել նորա մէջ կայտառ բնաւորութիւնը:

Բայց Բարսեղը հէնց որ Պոնտոսում իւր նպատակին յարմար տեղ գրտաւ, իւր լեռնային ապաստանարանի հիացուցիչ նկարագիրը իսկոյն իւր բարեկամին գրեց, որ իւր տեսակում՝ նշանաւոր նկարագրութիւն է. հին գրականութեան մէջ այն շատ սակաւներից մէկը, որ կարող էր դէպ ի բնութեան վիպական գեղեցկութիւնները տաճած սէրը Ներշնչել, պեղեցկութիւններ՝ որոնք իրանց բոլոր ընդարձակութեամբ և ուժով նորագոյն ժա-

մանակի միայն բացառական յատկութիւնն են կազմում 1)։ Յիշեցնելով որ ինքն թէև իւր եղբորից (Գրիգոր Նիւսացուց) լսել է իւր բարեկամի՝ իւր հետ միանալու հասուն ցանկութեան մասին, սակայն յաճախ այս վերաբերութեամբ այնպէս խաբուած, հազիւ կարող է հաւատալ այս լրին, նա այնուհետև ասում է. «ես պարտաւոր եմ միանգամայն գնալ Պոնտոս, ուր, եթէ Աստուծոյ հաճելի լինի, կը դադարիմ թափառաշրջիկ լինելուց։ Որովհետև վերջապէս քո մասին երբեմն տաժած յոյսերից հրաժարուելով (կամ՝ ճիշտն ասելով, երազատեսութիւնից, որովհետև լիապէս ընդունում եմ Պինդարոսի նկատողութիւնը թէ, յոյսերը արթունների երազատեսութիւններն են), ես Պոնտոս գնացի կեանք որոնելու համար։ Այնտեղ էլ Աստուած ինձ յատկապէս ցոյց տուեց տեղը, որ լիապէս համապատասխանում է իմ ճաշակին, այնպէս որ ես, յիրաւի դատարկ երեակայութեանս ցնորքների մէջ պատկերացրածս տեղը դտել եմ։ Այդ բարձրաբերձ լեռն է, թանձր անտառով պատած, որ հիւսիսից ոռոգւում է պաղ և թափանցիկ վտակներով, նորա ստորոտում խոնարհ հովիտ է տարածւում, որ միշտ ոռոգւում է լեռնաբուլիս վտակներով։ Անտառը, զանազան տեսակ ծառերի և թփերի կուսական անտառը, որ լեռան շուրջը աճում է, համարեա նորա պաշտպանի տեղն է բռնում։ Այնպէս որ, մինչև անգամ Պալիպսէի կղզին, որով Հոմերոսը որպէս գեղեցկութեան պսակով հիացած էր, նորա համեմատութեամբ ոչինչ է։ Այդ լեռը, յիրաւի, կղզու շատ նման է, որովհետև շուրջանակի պարփակուած է լեռնային ժայռոտ շղթաներով։ Նա երկու կողմից ունի խոր պատառուած վիհ, իսկ երրորդ կողմից անանցանելի սահման է գծում իւր բարձրաբերձ հանգոյցներով։ Լեռնային շղթան իւր լուսնաձև պտոյտ-

1) Հասարակ տեղադրութեան այս սլարդ նկարագրութեան մեջ՝ ասում է Հումբոլդտը, «եւ անտառային կեանքի մէջ արտայայտւում է նորագոյն ժամանակի զգացմունքի հետ աւելի անձուկ առընչութիւն քան մի ուրիշ տեղ աւանդել է մեզ յունական կամ հռոմէական հնութիւնը։ Լեռնային առանձնացած խրճից, ուր մեկուսացել էր Բարսեղը, աչքը յաժում է ծառերի վայրահակ տերեւների տամուկ յարկի վերայ»։ Այս նկարագրութիւնը «պարզ» անուանել ընաւ չէ կարելի։ Դէպ ի բնութիւնը սոյն այս սէրը նա նկատում է «էքսամերոն» գրուածքում, ուր Բարսեղը խօսում է աստղների մասին որպէս «երկնքի յալիսնական ծաղիկների մասին» եւ նկարագրում է փոքր—Ասիայի հիւսիսային վիշերները. նա նոյնպէս գովում է ծովի գեղեցկութիւնը, «ինչպէս մեղմիկ հովի շնչմամբ ծածանուելով՝ ծովը արտափայլեցնում է երկնային ծաղիկները երբեմն սպիտակ, երբեմն կապոյտ եւ երբեմն էլ վարդապոյն գոյներով եւ մարդու աչքը իւր հանդարտ խաղով պարարում է»։

ներով պարսպի պէս շրջապատում է դաշտի կողմից մատչելի մասը: Նա միայն մի մուտք ունի, այդ էլ մենք ենք բռնել: Խրճիթս շինուած է միւս բարձրութեան վերամբարձ, և չոր սարաւանդի վերայ, այնպէս որ բոլոր դաշտավայրը տարածվում է առաջ և այս բարձրութիւնից ես կարող եմ տեսնել ոլորապտոյտ ընթացող գետը, որ ինձ Ստրիմոնի տեսքից աւելի զուարճութիւն է բերում, երբ Ամփիպոլսից նայում ես Ստրիմոնին: Ոչ ապաքէն Ստրիմոնը իւր հեզասահ գնացքով լճացած է երևում, և իւր ընթացքը այնքան հանդարտ է, որ կարծես գետ չէ, մինչդեռ Խրիսը ինձ յայտնի գետերից ամենիցն էլ արագավազն է. փոքրիկ տարածութեան վերայ իւր ալիքներով ոգորում է պատահող ժայռի հետ, և այնուհետեւ նորա վերայից ոստում գործելով՝ մտնում է խոր ջրապտուտի մէջ, իմ և իւրաքանչիւր հանդիսատեսի համար հիանալի տեսարան կազմելով: Այդ գետը իւր բերքերով առատապէս լցնում է բնակիչների պտոյքը, որովհետեւ իւր խոր տեղերում անհամար ձկներ է սնուցանում: Հարկ կ'այ արդեօք քեզ գետնից ցնդող քաղցր գոլորշիքի մասին կամ գետի կողմից փչող մեղմիկ հողմի մասին պատմելու: Շատերը յափշտակուած կը մնային ծաղիկների բազմութեամբ կամ թռչունների ճռուողիւններով, բայց ես նոցա վերայ ուշ դարձնելու ժամանակ չունիմ: Այստեղի բոլոր գովութիւններիցս բարձրագոյն է այն, որ իւր բոլոր պտուղների առատութեան հետ, ամենից քաղցրագոյնն էլ է բերում — որ է հանգիստը: Ոչ թէ այն պատճառով որ աղատ է քաղաքային ժխորից, այլ այն պատճառով՝ որ բացի պատահաբար այցելող որսորդներից՝ ուրիշ ոչ ոք մեզ չէ այցելում: Բացի ուրիշ առաւելութիւններից այստեղ ապրում են գազաններ էլ, բայց ոչ որպէս ձեր արջերն ու գայլերը, ոչ. Աստուած մի արասցէ, այլ այստեղ արածում են եղջերուներն, վայրի այծերի, նապաստակների և այդ տեսակներին պատկանող կենդանիների հօրաններ: Ձեռն տեսնում, թէ ես իմ յիմարութեամբ որքան մերձ էի վտանգին, այսպիսի երկիրը փոխարինել ցանկալով մարդաբնակ աշխարհի խորշն եղող Տիրերիկի հետ: Ես այժմ այնտեղ եմ աճապարում. ներիր ինձ, նոյն ինքն Ալքմէօնն էլ, երբ Եփեսոսը գտաւ, էլ չը դիմացաւ իւր պանդխտութեանց:

Տիրերիկն գաւառն, ուր Արիանդն էր գտնվում, կարծես Բարսղի համար ծաղրածութեան առարկայ էր. իսկ Գրիգորը իւր ծննդավայրը պաշտպանելով՝ բարեհոգութեամբ ծիծաղում էր Բարսղի բանաստեղծական նկարագրութիւնների վերայ: «Ծաղրիր որքան կամենում ես, պատասխանում էր Բարսղին Գրիգորը, իմ համար բոլորը մէկ է, վատնիր ճոխաբանութիւնդ: Քեզանից եկած ամեն բան սիրելի է ինձ: Երևում է որ դու ինձ ոչ թէ ծաղրելու համար ես ծաղրում, այլ քո կողմը քաշելու

Համար, այնպէս՝ ինչպէս մարդիկ գետերի առաջը թմբեր են կանգնացնում՝ որ նոցա ընթացքը այլ կողմ ուղղեն: Նկատողութիւններդ իմ վերայ այդ տպաւորութիւնն են գործում: Պատրաստ եմ հիանալ Պոնտոսովդ, պոնտական մառախուղով և այդ, միայն աքսորականների համար պիտանի, վայրովդ, գլխիդ վերևը կարկառուող քարաժայռերովը, հաւաքդ փորձի ենթարկող վայրի երէններովը և լեռան ստորոտում ձգուող հարթութիւնովը (գորան արիսի որջ արդեօք չանուանե՞մ, Փրոնտիստերիայի, վանքի և պարապորգութեան փքուն պատուանդաններով), վայրենի ամայութեան անտառակներովը, և մեկուսացեալ լեռների կատարներովը, որոնք ոչ թէ քեզ պսակաւորում, այլ կաշկանդում են, և շնչածդ օդովը, և խողովակի միջով տեսածդ արեգակի փայլովը, որին անձկանում ես: Ա՛յ դուք պոնտացի Արմեւրացիք և անարե մարդիկ, ոչ միայն վեցամսեայ գիշերների դատապարտուածներ, (ինչպէս ոմանք են ասում) այլ մշտական ստուերի դատապարտուածներդ, որովհետեւ ձեր կեանքը մի երկար գիշեր է, և ճշմարիտ, Սուրբ Գրքի ասածի պէս՝ «ստուեր մահու»: Ես էլ եմ նեղ և անձուկ շաւիղը գտնում, բայց չըզիտեմ դէպ ի Աստուծոյ արքայութիւնն է տանում թէ դէպ ի դժոխք: Բո համար՝ թող նա դէպ արքայութիւն տանի, Իսկ միջին վայրը, անուանե՞մ արդեօք սխալմամբ այն Եգեմ, Իսկ չորս առաջը բաժանուող աղբիւրը, որոնցով ոռոգվում է երկիրը, թէ անջրգի և անբերրի անապատը: Ժայռից գաւազանով աղբիւր բղխեցնող Մովսէսն էլ կարող է արդեօք այդ երկիրը պտղաբեր դարձնել, Ապաքէն ուր չըկան քարեր, այնտեղ լեռնային հեղեղատի դաշտն է, իսկ ուր չըկան վտակներ՝ այնտեղ տատասկային վայր է, իսկ բոլոր տատասկների վերայ՝ անդունդ, վճի վրայով ծործորներով շրջապատուած է շաւիղը, որն անհանգիստ է անում անցնողներին և ստիպում, որ անվտանգ լինելու համար հոգան, Իսկ ստորոտում մոնչում է խաղաղ գետը, այդ ձեր Ստրիմոնն է, որ, որքան առատ է ձկներով՝ նոյնքան և կատաղի է, նա չէ լճանում, այլ կատաղարար գահալիժում է դէպ ի անդունդը, ո՛վ դու գեղեցիկս դանդաչող և տարօրինակ արտայայտութիւններ հնարող, Այդ գետը մեծ է և սարսափելի, և վերը գտնուողների սաղմոսերգութիւնը անլսելի է կացուցանում, Նորա համեմատութեամբ ոչինչ են նեղոսի ջրվէժներն ու ջրընկեցները, Այդ գետը լինելով վայրենի, անանցանելի, աղմկալից և խմելու համար անպէտք՝ միայն իւր բարձրագոյն դրշմամբ խլացնում է քեզ գիշեր ցերեկ, Նորա մէջ միակ մարդասիրական բանն է, որ քո բնակարանն էլ տեղահան չէ անում, երբ որ նորա վտակներն ու հեղեղատները կատաղում են, Ահա թէ ես ինչ եմ մտածում՝ քո երանաւէտ կղզուդ բնակիչ երջանիկներիդ մասին, Բո լուսնածաւ կտրտուած հովիտներովը մի յափշտակուիր, որոնք ձեր հար-

Թուժիւնների մատչելի մասերը աւելի պարաւանդում են քան պաշտպանում, մի յափշտակուիւր լերան կարկառեալ մասով, որ ձեր կեանքը Ցանտալոսի կեանքին է նմանեցնում, մի յափշտակուիւր ձեր ընկճուած հոգին թարմացնող հողմերովը և գոլորշիներովը, և քաղցածութեան պատճառով միայն անապատի մէջ պտոյտների գործող թռչունների արձակած ճուղողիւններովը: Ասում ես որ միայն որսորդութեան համար են այդ տեղ մանում, իսկ ես կասեմ որ որսորդներից ամէն մէկը ձեր վերայ նայում է որպէս կենդանի թաղուածների վերայ: Եթէ այս ամենը մի նամակի համար երկար է, բայց մի կատակերգութեան համար՝ կարճ: Լաւ կանես որ հանաքս սիրով տանես, ապա թէ ոչ՝ էլ ոչինչ չեմ գրիլ:»

Այս հանաք — նամակը մեզ կարող է սակաւ ինչ տաղտկալի և ձրգձգուած երևել, բայց թարգմանուելիս էլ շատ բան կորցնում է, և մենք, ի հարկ է, բաց ենք թողնում նուրբ երգիծանքի այն նշանաւոր կտորը, որ իւր մէջ բովանդակում է այն ոճն, որով Գրիգորը հեղնում է իւր բարեկամի «լուսնաձև կտրտուած հովիտների, թռչունների քնարական ճրուղողիւնների, և լեռնային կարկառի» բոլորովին անսովոր նկարագրութիւնը: Մի այլ նամակում Գրիգորը ուղղակի ասել էր իւր բարեկամին որ, ինքն պարտաւորուած է զոհել գէպ ի իւր ծնողներն ունեցած առաջնական պարտականութեանը իւր սկզբնական ցանկութիւնը, այն է, Բարսեղի հետ բնակակցիլը նորա պոռտական ապաստանարանի այս դրախտում՝ բլուրների, անտառների և վտակների միջև: Բայց և այնպէս նա խոստացել էր գոնէ ժամանակաւորապէս Բարսղի մօտ գնալ և վերջապէս կարողացաւ կատարել իւր խոստումը: Յետոյ երկար ժամանակ անդուլ հիացմամբ մտաբերում էր այս խնդառիթ ժամանակը, Թէ և նոցա ապուրը գգուարամարս էր և հացը՝ քարթու (հին), իսկ Գրիգորն ու Բարսեղը հասարակ մշակի պէս աշխատում էին կուերի (քակոր) «Աւգիասեան կոյտերը փոքրիկ պարտեզի մէջ սփռել՝ հաւասարեցնելով փնները, և մինչև անգամ անձամբ քարշում էին ծանր բեռնաւորուած սայլակները, բայց այս ժամանակի ամենատաժանելի չարչարանքները, որ միայն միմեանց բարեկամութեամբն էին տանելի եղել, նոցա միմեանցից հեռի եղած ժամանակ հիացմամբ էին մտաբերվում: «Պոնտոսում վարած կեանքիդ մասին, ասում է Գրիգորը, ինչ որ գրել եմ, հանաքով եմ գրել, իսկ ինչ որ այժմ եմ գրում, — գրում եմ կատարեալ լրջութեամբ: Երանի թէ ինձ փոխադրէին անցեալ ամիսների առաջին օրերի մէջ, երբ ես քեզ հետ տաժանելի աշխատութեան մէջ զուարճանում էի: Յօժարակամ տանջանքը ակամայ վայելքից աւելի թանկագին է: Ո՞վ կը տայ ինձ այն սաղմոսերգութիւններն ու հակումները, և աղօթքով գէպ ի Աստուած վերանալը, ո՞վ կը տայ, ինչպէս կ'ասեն, աննիւթական և անմարմին կեան-

քը, Ո՞վ կտայ այն հոգւոյ և կեանքի միութիւնը — եղբարց մէջ, որոնց դու պաշտում ես և փառաւորում: Ով կըտայ կանոններով և որոշումներով մեր ապահովեցրած նախանձաւորութիւնն ու նախանձայուզութիւնը դէպ ի առաքինութիւնը: Ո՞վ կըտայ ինձ սուրբ յայտնութիւնների մէջ այն թարթափումն ու սիրած լոյսը, որ Աստուծոյ Հոգւոյ օժանդակութեամբ նոցա մէջ գտնվում է: Կամ, փոքրիկ և սակաւ նշանակութիւն ունեցող առարկութիւնների մասին խօսելով—Ո՞վ կըտայ ինձ հանապազօրեայ վաստակների մշտական կրկնութիւնը, այսինքն, փայտ կտրելը, քար տաշելը, տնկելն ու ոռոգանելը: Ո՞վ կը տայ ինձ Քսերքի սօսուց, որի տակ նա սովորաբար նստում էր, աւելի գեղեցիկ ոսկի սօսին, որի տակ նստում է խստամբերութիւնից թօշնած արեղան. այն ծառը, որ ես տնկեցի, Ապօղոսը, այսինքն արժանապատուութիւնդ ոռոգեց, իսկ Աստուած, իմ բաղդից, աճեցրեց, որ տապանակի մէջ պահուող Ահարօնի ծաղկեալ գաւազանի պէս վաստակներիս յիշատակը սրտիդ մէջ անմոռաց մնայ»:

«Այս մասին աղօթելը հեշտ է շատ, իսկ նրան ձեռք բերելը ո՛չ: Սակայն օգնիր ինձ և առաքինութեամբ ոգևորիր. իմ տեղս աշխատիր և աղօթքովդ պահպանիր իմ համար մեր երբեմն միասին վայելած առաւելութիւնքն, որ մենք կարճ ժամանակում, երեկոյացած օրուայ բստուերի պէս չը ոչնչանանք: Ոչ ապաքէն օգից աւելի քեզանով եմ շնչում. կենդանի եմ, երբ կամ անձնական ներկայութեամբ կամ ի հեռուստ քեզ երեակայութեանս առաջ ունենալով՝ քեզ հետ եմ»:

Գրիգորի և Մեծն—Բարսղի՝ միասին վարած կեանքի մասին իրանց ապաստանարանում՝ խօսուած է Բարսղի կենսագրութեան մէջ, Այդ կեանքը նման էր վանականների սովորական կեանքին «իւր հսկումներովը, պահքերովը, կոծերովը, կուրծք բաղխելովը, գիշերային ոտնակացութեամբ, դէպ ի Աստուած ուղղուած հոգւոյ հառաչանքներովը, չը յարգարած մաղերովը, առաքելոց համանման բոկոտն և անփոյթ հագուստովը, անթարթ աչքերովը, Ի հարկէ մարդկային թուլութիւնները այս հրեշտական կեանքին երբեմն այլ կերպարանք էին տալիս. և նոյն ինքն Բարսեղն էլ կարող էր «անօթի և վշտացած լինել»: Որպիսի հաճութեամբ էր դարձնում Գրիգորը իւր հայեացքը դէպ ի այս կարճատե շրջանը: Անկասկած նա, ինչպէս և Բարսեղը, համարում էր որ, թէև մարդըս կարող է խոյս տալ աշխարհից, բայց իրանից երբէք չէ կարող խուսափել, և թէ մարդս աշխարհի պատրանքից կարող է զգուշանալ նոյնպիսի յաջողութեամբ բնակուելով քաղաքում ինչպէս և անապատում: Այս միանձնութեան կարճ ժամանակի արժանաւոր արդիւնքը եղաւ, ինչպէս յայտնի է, մի նշանաւոր գիրք: Երկու բարեկամները մի

ժողովածու կազմեցին Որոգինէսի թանկագին վաստակների հաւաքածուից, որ ցայսօր գոյութիւն ունի «Ֆիլոկալիա» վերտառութեամբ: Այս գիրքը արտացոլացնում է այն տպաւորութեան մի ապացոյցը, որպիսին դրոշմել էր եկեղեցւոյ ուսուցչի շնորհափայլ հանճարը մեծ հայրերի հոգու վերայ: Գրիգորը օգնեց Բարսիլին՝ եբբ նա խմբագրում էր կանոններն, որոնց ժողովածուն արեւելքի բազմաթիւ վանքերի բուն կանոնագիրքը դարձաւ:

(Եւրոպական)

Յ. Վ. Մ.

ԽՈՐԵՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ 1)

9.

ՄԱՐԱԲԱՍԻ ԽԱՒԱԼԸ.

Նախընթաց յօդուածում գիտեցինք Խորենացու երկու հակասութիւնը, երկուսն էլ բացատրեցինք բնագրի խանգարմամբ և ջանացինք ուղիղը վերականգնել: Մեր Բ. յօդուածում առիթ ունեցանք ցոյց տալու թէ ինչպէս «Հայկայ» անուան յապաւմամբ, Ա. գիրք Տ գլխում, Արմենակն է դարձել Բէլի հետ կոտորը, որով ծագում է հակասութիւն Խորենացու պատմութեան մէջ: Ակնհերե է որ այս հակասութիւնը նմանապէս ձեռագրի աղջատման հետեանք է, ուստի և մեր կարծիքով սխալում էր հանգուցեալ Բ. Պատկանեանը, ենթադրելով՝ այս Տ գլխի իրր թէ Արիւղենոսից առնուած հատուածի վրայ հիմնուած, թէ Հայաստանում պահպանուել էր երկու աւանդութիւն, որոնցից մէկը Բէլի գէմ՝ եղած կոիւր վերագրում էր Հայկին, մինչդեռ միւսը՝ Արմենակին 2): Եթէ այդպիսի կրկին աւանդութիւն գոյութիւն ունենային, Խորենացին այդ չէր կարող ծածկել, և ստիպուած կլինէր երկուսն էլ յիշել, մէկն ընտրելով միւսն հերքելով, ինչպէս վարուել է Բագրատունիների ծագման խնդրում: Թէև սրանով չեն խախտուում Պատկանեանցի այն հիմունքները, որոնց վրայ յիշուած՝ նա փորձեց Հայկի գիւցազնական շրջանը (Cycle) որոշել Արմենակի շրջանից—ցիկլից:

Բայց այս բոլոր հակասութիւնները չնչին բաներ են համեմատած այն

1) Տե՛ս «Արարատ», տարի 1.

2) Вавскія Надписи, 90.